

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՑՈՂՈՒԹԻՒՆՔ.

Ա.Զ.

Ալագետով առերածները և գիշեր. Սադաշն էկեղեցի. Գեղեղմանաքուն. Գյուղենասոց էկեղեցիներ. Նահապատին գերեզման. Տարսույթն էլեւանի և Մինա Խանունի պատրիքները. Եղեգին գիշեղագաղաքը. Նորա վըսայ պատմական պեղեկունիւններ. Գիշեկի վան+. Խորհրդածունիւն Կառշաղ և Կաբախը գիշեցը. Կալանչը գիշեր:

Ալագեազի բերդից իջնելով կրկին Հոստուն գիւղը՝ ես ճանապարհս շարունակում եմ միւս ձորով, Ալագեազի ձորով կամ Ալագեազ գետի ափերով, Հոսանքին հակառակ ուղղութեամբ: Հոստունից մինչև Ալագեազ գիւղը, այդ խոր ձորի մէջ, որ սեղմուած է Թեաքաղոնդուրան լերան և Ալագեազի բերդասարի մէջ, լայնութեամբ կէս վերստ և երկարութեամբ մօտ երեք վերստ, ճանապարհորդը կտեսնի ահոելի քարակոյտներ, ցանուցիր աւերակներ, տների և ձիթահանքերի փլատակներ, նեղ և ծուռ փողոցներ, լայնածոց գերեզմաններ, կանգում և խոնարհուած, ամբողջ կամ փշրուած խաչքարեր, մատուռներ և եկեղեցիներ, այգետեղեր և մի քանի թթենի և փշատենի ծառեր:

Ամբողջ և գեռ կանգում խաչքարերի կարգումն են Խոյգեղայ որդւոց Աւետիսի և Մխիթարի կանգնեցրած արձանը, 732—1283 թուականին. գրիգորի և Մխիթարայ արձանը 789—1340 թուականիս, Երշահի որդի Գրիգորինը 728—1279 թուականիս, և այլն և այլն: Այս տեղի վանքերը, մահարձանները և խաչքարերը վերաբերում են Յըրեղեանց տոհմի իշխանութեան շրջանին, առաւելապէս Տարսային և Բուրթել իշխանների ժամանակին, ինչպէս ցոյց են տալի թուականը և արձանագրութեանց բառերը «ի բարեպաշտ իշխանութեան Տարսայիննի կամ Բուրթելի և այլն». յիշեալ քարերի արձանագրութիւնները տպագրուած լինելով Զալալեանի ճանապարհորդութեան մէջ, ես զանց եմ առնում նոցա:

Ճանապարհը Հոստունից գէպի Ալագեազ գիւղը անցնում է յիշեալ աւերակների կոյտերի միջով: Խորաքանչիւր քայլափոխում հանդիպում ես ձիթահանքի, խաչքարի, այգետեղի,

փողոցի, տան վլատակի և այլն, և այդ բոլորը մի առ մի նկարագրել անհնարին է: Եթէ նայէք վեր, կտեսնէք ձեր գլխի վերայ կախուած սարսուռ ազգող ժայռերի ծայրին Ալագեաղի բերդը: Եթէ փորձէք մօտենալ գետափնեայ աւերակներին, այդ համարեա անհնարին է, ըստ որում այնտեղ կուտակուած են բլուրների նման մանր և խոշոր քարի բեկորներ: որոնց արանքներում, տեղ առ տեղ հանդիպում են տների բագեր, փողոցի պատեր, կամ այլ շինութեանց հետքեր: Շարժուել կարելի է այդ տեղ միմիայն ոտքով, այն էլ սարսափելի դժուարութեամբ, և մեծ զգուշութեամբ, որպէսզի քարերը բարձրից չգլորուին ցած, ոտերդ փոխում ես մի քարից միւսը և այծեամի նման բարձրանում մի բլրանման քարակոյտի գագաթ, այնտեղից իջնում մի պատի վերայ կամ բագի մէջ, որտեղից նորից բարձրանում ես այլ քարակոյտի գլուխ և այլն: Մարդ զարմանում է թէ ինչպէս կարող էին մարդիկ բնակուել և շարժուել այդպիսի կոյտերի մէջ:

Մեզ հասած եկեղեցիները, մատուռները, գերեզմանատները և այլ յիշատակարանները այս աւերակների մէջ բացառապէս զետեղուած են աւերակների արևելեան ծայրում, այժմեան Ալագեազ գիւղի շուրջը: Խսքը Ալագեազ գիւղը, որ զուտ թրգարնակ է, կառուցած է հին աւերակների վերայ, որ երբեմնապէս բացւում են գետնափոր տներ, կամարակապ ստորերկրեայ ջրանցքներ, կրապատ հորեր ցորենի համար և այլն: Գիւղը զարդարուած է Խօսենի և պտղատու ծառերի մի քանի այգիներով: Այդ աւերիչ հասարակութիւնը իւր անդաստանի սահմաններում գտնուած հայ բազմաթիւ աւերակների և եկեղեցիների կատարեալ տիրապետովն է: Առքա են որ անասուն են պահում ծաղացքարի վանքերում. սոքա են որ իւրեանց մօտի եկեղեցիների պատերի սրբատաշ քարերը պոկում տանում են իւրեանց անշնորհ տների շինութեանց համար, կամ անասոնց գոմերի յատակը սալելու համար:

Գիւղի արևելեան եզրում, չորս քառանկիւնի սիւների վերայ կանգնած կայ մի եկեղեցի կոպտատաշ քարից՝ երկու դըռնով, հարաւային և արևմտեան: Կամարածածկ յարկի տակ, չորս պատերի մէջ կան 10 հատ լուսամուտ: Ունի երկու խորան: Եկեղեցու շինութիւնը գեռ ես ամբողջ է և ընդար-

ձակ, 15 քայլ լայնութեամբ և 18 քայլ երկարութեամբ մինչև բեմը: Նա կառուցած է 1152 (1703) հայկական թուականում ինչպէս ցոյց է տալի արևմտեան դրան վերի, արտաքուստ արձանագրութիւնը «Եկեղեցի թվի ՌՃՇԲ»: Անունը բոլորովին անյայտ է: Եկեղեցին թէպէտ վերջին ժամանակի շինութիւն է, բայց ինչպէս ցոյց է տալի նորա արտաքին ձեզ, նորոգութիւն է հին բեմի վերայ, ըստ որում բեմի ճակատի վերայ՝ հնութիւնից մաշուած միատող արձանագրութեան մէջ հազիւ որոշելի են Սմբատ, Աշոտ, Շահնշահ բառերը: Արևմտեան դրան մօտ, ներքուստ, կայ մի տապանաքար անարձանագիր:

Եկեղեցուց դէպի արևելք նշմարում ենք լայնածոց գերեզմանատուն շատ տապանաքարերով, որոնց թուականը ըստ արձանագրութեանց հասնում է 700 մինչև 800 հայկական թուականը: Նոցա կարգում կանգնած են չորս խաչքարինք, երկուսը Ամկանի և իւր կողակից Ամիսթէի յիշատակին, իսկ միւսի արձանագրութիւնը ձայնում է «Ես Ապլիկ գնեցի զայս հողս Խէ (27) գեկանի և արարի գերեզմանատուն Հայոց»: Սա թիւ չունի, բայց հաւանական է որ կանգնած լինի իւրեան կից եղածներին հետ, այն է ԶԲ (702—1253) թուականին: Ուրեմն տասներեքերորդ գարու կիսում Ապլիկը գնել է այս հողը գերեզմանատան համար որ կայ մինչև այսօր:

Այս գերեզմանատան մէջ կանգնած է մի սրբատաշ կրամած՝ գմբեթաւոր փոքրիկ եկեղեցի, վեց քայլ լայնութեամբ և այն չափ երկարութեամբ մինչև բեմը և երկու որմնափակ սիւնով: Ունի ութ հատ փոքրագիր լուսամուտներ, որոնցից չորսը գմբեթումն են: Գմբեթի կամարը ներսից զարդարած է միմեանց յարմարեցրած սև և կարմիր քարէ խաչերով: Այս տեսակ հիւսուածների շքեղ օրինակը կարելի է տեսնել նա և Ալեքսանդրապոլի մօտ՝ Հառիճոյ վանքում, Անւոյ մօտ՝ Հոռոմոսի վանքում և նոյն իսկ Անւոյ եկեղեցիների և այլ շինութեանց մէջ:

Գեղեցկաշէն եկեղեցու միակ արևմտեան դուռը բացւում է նորան կից քառակուսի գաւիթը, լայնութեամբ և երկարութեամբ հաւասարաչափ 10 քայլ, հասպարակ քարից, որոյ հիմնապատերը միայն մնացել են այժմ և որի մէջ հողում ընկղմուած մի խաչքար ԶԾԴ (954) հայոց թուականին: Գե-

զեցիկ կաթոսյածեւ կարմրաներկ աւաղանը հիւօհսային պատի մէջ կիսով չափ դուրս լինելով՝ մասամբ ջարդուած է թուրքերից, որոնք չեն խնայել քանդել և տանել բեմի շրթանց երկար սրբատաշ քարերը։ Հարտւային պատի լուսամուտը, արտաքին կողմից շրջապատում են երկու շրջանակներ, որոնց վերի քանդակագործ ծայրերը վերջանումեն օձանման վիշապագլխով, վիզերը միմեանց փաթթած և բաց բերանները դէմ առ դէմ բռնած։ Այդ իսկ հարտւային լուսամտի տակ նկարած է արեգական ժամացոյց։ Սորան Զալալեանի գիրքը զետեղել է վիշապների գլուխների մէջ, աւելացնելով թէ «գուցէ երկոքին գլուխք այնր վիշապի նշանակեն զորիւ զգիշեր, որը անգաղար ծախեն զժամն և զժամանակ» *):

Տարաբաղդարար եկեղեցու պատերի վերայ չկայ ոչ մի արձանագրութիւն, որ ցոյց տար նորա անունը, թուականը, հիմնարկողին և այլն։ Բայց որովհետև գերեզմանատան հողը գնած է 1253 թուականին և եկեղեցու պատերի տակ՝ զանազան տապանաքարերի շարքում կան Ստէփանէի և Պատրիարքի հանգիստները 1318 և 1319 թուականների, ուստի հաւանական է որ եկեղեցու հիմնարկութիւնը եղած լինի տասներեքերորդ դարու երկրորդ կիսում։ Նա չսւնի խորաններ։ Եկեղեցին գեռ ևս ամբողջ է, միայն ժամանակի ձեռքերը սակաւ առ սակաւ քանդում են գմբեթի լուսամտի շուրջը և կամարների արտաքին ծածկը, իսկ թուրքերի ձեռքերը տարել են, ինչպէս վերը ասացի, բեմի քարերը և կոտրել են աւաղանը։

Սոյն եկեղեցու հարաւային կողմում, երեսուն քայլ հեռաւորութեամբ, նկատւումէ մի մատրածե շինութիւն, որոյ հիմնապատերը միայն մնացած են և դորա մէջ տեղ մի նահատակի տափարակ տապանաքարի փորուածքի մէջ զետեղուած են միմեանց կից չորս քառակուսի սպիտակ մարմարին սալ, որոնց երկուսի վերայ մանր տառերով փորագրած է հայերէն տապանագիր շատ դժուար որոշելի, իսկ միւս երկու սալի վերայ արձանագրութիւնը գուցէ լինի արաքերէն կամ պարսկերէն։ Սոցա կազմութիւնը վերաբերում է ՊԱ (801) հայկական թուականին։ Արձանագրութեան դժուարին ընթերցանութեան մա-

(*) Զալալ. ճանապ. Հ. Բ. երես 153.

սին գանգատում է և Զալալեանի գիրքը։ Տեղական թուրքերը, գուցէ արաբական տառերից յափշտակուած, երբեմն ուխտ են գոլի այդ նահատակին։

Նահատակի մատուռից հինգ քայլ գեպի հիւսիս, գեպի վերը նկարագրած գմբեթաւոր եկեղեցին, հողի տակ թաղուած է երկու կտորից բաղկացած կիսաբոլորակ քար, բարձրութեամբ մօտաւորապէս երեք արշին, իսկ երկայնութեամբ չորս արշին։ Ստորին կտորը ներկայացնում է ծաղկահիւս նկար, այն ինչ վերի կտորը ներկայացնում է երկու մարդոց կերպարանքներ աթոռների վերայ բազմած։ Զննողի աջ կողմից նստած այր մարդը հագած է երկայն շորեր և փեշերի տակից երևում են ոտերի միայն թաթերը։ Նորա բաց գլուխը շրջապատած է լուսեղէն ճառագայթներով և մանեակը զարդարում է նորա պարանոցը։ Նորա աջ ձեռքը դրած է ծնկան վերայ, իսկ ձախ ձեռքը քարի հետ կոտրուած անհետացել է։

Այր մարդու աջ կողմում, միւս աթոռի վերայ, բազմած է մի կին, նոյնպէս երկար շորերով և տակից երևում են միմեանց վերայ ծալած ոտերը։ Սորա աջ ձեռքը դրած է իւր գոտկում, իսկ ձախը համապատասխան ծնկան վերայ։ Երկու ականջի առաջից կախուած են ոլորած կարճ գլխամազերը, ինչպէս այժմ ևս սովորութիւն է թիֆլիզում և վրաստանի կողմերում։ Նորա գլուխը ծածկումէ վերի մասը քառանկիւնի գլխարկ, որպիսին գործ են ածում այժմ Մոսկվայում, Պետերբուրգում կամ այլ քաղաքներում կառապանները (կուչերները)։ Այդ պատկերների վերը դրած է «ԹՎ. ԶԻԴ (723—1274) Աստուած շնորհաւոր» «անէ դարապառ պարոն Տարսայինին Մինա Խաթունի» «իւր ամուսնաւ»։

Այս է ահա այդ արձանների ճիշտ նկարագրութիւնը։ Բայց Զալալեանի գիրքը խիստ աղաւաղել է նորան։ Նա այր մարդու ձեռքում դրել է գայիսօն, և սորա մանեակը տարել փաթթել է կին մարդու վիզը։ Կնոջ մի ձեռքը դրել է ծնօտին, միւսով փաթթել է այր մարդու մէջքը և այն։

Յիշեալ արձանագրութիւնը ցոյց է տալի որ այդ քարը պէտք է լինի Տարսայինի պալատի դրան կամարաքարը։ Այդ դարպասը պէտքէ կառուցած լինէր Ալագեազ գիւղում և գուցէ այդ քարի շրջակայքում ուր այժմ այդպիսի շինութեան ոչ մի

կեցիք և Այնաշուրցիք—Ալագեազ գիւղի ձորը կոչում են Ըլիւտայ Յոր։ Այդ անունն է Եղեգնայոր բառի աղճատեալը։ Օրբելեանը ասում է «Երանելի Եպիսկոպոսն Սիւնեաց պատահեալ ի տեղի մի յԵղեգեաց Յորի», ի վերայ Ոստին գեղջն։ *) Ոստին գիւղը այժմեան Հոստունն է և Եղեգեաց ձորը նրանից վեր։ Նոյն Օրբելեանը մի այլ տեղ ասում է «սահմանեցաք զԱրատեսի վանքն, որ ի վերայ Եղեգեաց» **) Արատեսի վանքն Ալագեազից, այն է Եղեգնիսից վերև է։ Վայոց ձորում կար մի գիւղագագիք որ կոչվում էր Եղեգիս, ուր բնակւում էին Սիւնեաց իշխանները։ Մտեփաննոս Օրբելեանը մի քանի տեղ յիշելով այս գիւղագագագիքի անունը, յիշում է նոյնպէս իւր պատմութեան առաջին հաստորի և Ն. գլխում, թէ Աստուածազօր Սմբատ իշխանը մի օր գուրս եկաւ (385 հայոց թուականին) իւր արքունիքներից որ Եղեգիս գիւղագագումն էին։

Այս բոլորից ես Եղբակացնում եմ որ այժմեան Ալագեազի ձորը Եղեգեաց ձորն է և Ալագեազի աւերակներն Եղեգիսն է։ Եղեգիսը տեղական հայերի համար դարձել է Ըլիւտրքերի համար—Ալագեազ։ Եղեգնիսում եղած են այգիներ և ծաղկոցներ։ Սիւնեաց իշխան Սուփանը Մաքենոցաց վանքին, մօտ 350—901 թուականին, նուիրումէ երկու այգի Եղեգիսում, ինչպէս հաստատում է Օրբելեանը իւր պատմութեան առաջին հաստորի Լէ. գլխում։ իսկ Սոփիսա տիկինը, Սմբատ իշխանի ամուսինը ընծայում է Ահերմոնի վանքին մի քանի այգիներ և ծաղկոցներ Եղեգնիսում։

Այս գիւղագագագը մի քանի անգամ ենթարկւում է պատերազմական յարձակմունքների։ Արաբացւոց Խւոռվագի ոստիկանի երկրորդը, Սբուկ կամ Նասր անուն, կամենում էր որսալ և Վայոց ձորի Սմբատ իշխանին, որ իւր զօրքով ամրացել էր իւր արքունիքում Եղեգիս գիւղագագագի մէջ ***։

Թաթարաց Ասլան զօրավարը 1236 թուականին պաշարելով Ելիկում Օրբելեանին իւր ընտանիքով Պրաշկաբերդում, վերջապէս խաղաղաղութիւն խօսեց նորա հետ և Վայոց ձորը և

(*) Օրբ. պատ. Նահ. Սիս, գլ. Ռ.

(**) Նոյն տեղ. գլ. ՀԱ.

(***) Նոյն տեղ գլ. Լ. Է.

Եղեգիսը գրեց նորա իշխանութեան ներքոյ *): Առանով վերջացնում եմ Եղեգեսի վերայ խօսելս և շարունակում եմ իմ ճանապարհը նոյն Ալագեազ գետի ափերով:

Ճանապարհը անցնում է ժայռապատ ձորի միջով: Գետը արագութեամբ վաղում է քարերին զարնուելով և աղմուկ հանելով: Նորա երկու ափը զարդարուած են գալարուն, կանաչ խիտ առ խիտ ծառերով: Ամարային եղանակին ես հըրծուանկով անցնում եմ նորանց սոսուերի տակ: Խըրագանչիւր քայլափոխումն հանդիպում եմ սառնորակ աղբիւրների, որոնք հոսում են գէպի գետը գիմաղիր ժայռոտ լեռներից: Հինգ կամ վեց վերսուաչափ անցած, գետի ափում տեսնում եմ Գիւնէի վանք գիւղացի Ասագուլլայի ջրաղացը: Աս նշանաւոր է նորանով, որ շինած է հին ջրաղացաեղում և որ գիշաւորն է՝ նորա նաւը 3—4 սաժէն երկարութեամբ կաղմուած է երկու կտոր ամբողջ քարից, ծայրերով միացած իրար հետ: Նաւը իւր ջրաղացով մնացած է հին ժամանակներից և գուցէ պատկանելիս լինէր Գիւնէի վանքին, որի եկեղեցին գրած է լերան լանջում ջրաղացից գէպի հիւսիս:

Ջրաղացի և վանքի միջոցում սարալանջը ծածկուած է ընկուղենիներով: Խաղողի որթով և այլ պտղատու ծառերով վայրենի գրութեան մէջ: Դորանց տակով հոսում են սառնորակ աղբիւրներ, սկիզբը վերցնելով եկեղեցու շրջակայքից: Այդ ժառաստանը երեխ վանքապատկան այգին է եղած: Փոքր ևս շարունակելով ընթացքս՝ ես հասնում եմ մի թրքաբնակ անճոռնի գիւղի, Գիւնէի լան+ անունով, առնուած վանքի անունից: Ճանապարհը գէպի վանք թեք սարալանջի վերայ սկսւում է գիւղից: Աստիճանաբար բարձրանում եմ և ճանապարհի վերայ և վանքի շուրջը տեսնում եմ անտրձանագիր տապանագարեր, Եկեղեցու շրջապատ պարիսպը լայնանիստ չէ, բայց բարձր է, թէև տեղ առ տեղ քանդուած: Արևմտեան կամարակապ գուռու տանում է մեզ ներս, ուր տեսնում ենք հինգ կամ վեց փլուած սենեակներ: Զալալեանի գրքի յիշած Սերովը եպիսկոպոսի տապանագարը ես չգտայ, այլ տեսայ ու-

(*) Օբր. պատմ. Նահ. Ախ, գլ. ԿԶ.

թիշ տապանաքար, հետեւեալ արձանագրութեամբ «Այս է հանգիստ Մահաւղունի ԶՀԲ (772):

Եկեղեցու արևմտեան դրան վերը, արտաքուստ, պատի մէջ գրած է խաչքար «խաչս բարեխօս Ցէր Եղիշա . . . թվակ. ԶՀԳ. (973—1524): Արևելեան պատի վերայ, արտաքուստ, միաշար արձանագրած քարերը ոչինչ կապ չունին միմեանց հետ, երեխ բերուած են այլ տեղերից: Եկեղեցու հարաւային պատի արտաքին երեսը բոլորովին քանդուել է և այդ տեղ դուցէ եղած լինի արձանագրութիւն, ըստ որում քարակոյտների մէջ արձանագրած կտոր—կտոր քարեր են երեսում:

Եկեղեցին հասարակ քարից է, կրաշաղախ, կամարակապ առաստաղով, սագաշէն: Արևմտեան դուռը քարերով և ոչխարների արտահոսութիւնով այնքան է լցուած, որ մտնելու ժամանակ պէտքէ սողաս: Եկեղեցու չորս սիւներից յետին դասի երկուսը որմնափակ են: Սեղանի երկու կողմից կան մի մի խորան: Պատերի մէջ աջ և ձախ հագուցած են զանաղան տապանագարեր և խաչքարեր: Հիւսիսային սիւնի վրայի անթուական, կցկտոր և մասումք եղծուած արձանագրութիւնից իմանում ենք, որ Տարսային իշխանը տուել է սուրբ Գրիգորի տաճարին Խոպանի այգին: Խոկ հարաւային պատի կարճ և փակագիր արձանագրութիւնն է «Նորոգեցաւ սուրբ Գրիգոր» և այլն: Եկեղեցու մէջ, բեմին հաւասար, անասնոց արտահոսութիւն է հաւաքուած տասնեակ տարիների ընթացքում:

Վանքը թուրքերից կոչվում է Գիւնէի վանք, որի բառացի թարգմանութիւնը առնելով, Զալալեանի գիրքը մկրտել է Արքանուայ լանեւ: Ահա ինչ որ կարելի էր հաղորդել այս վանքի մասին: Զիմացանք ուրեմն ովկ է հիմնել և ե՞րբ, ովկ է նորոգել և ե՞րբ, ի՞նչ տնյեալ և վիճակ է ունեցել և այլն: Իմացանք որ անունը «ուրիշ Գրիգոր» է:

Սակայն ես կամենում եմ փորձ փորձել, թէ չէ կարելի արդեօք պարզաբանել այս վանքի անցեալ վիճակը: Աորա համար ես գիմում եմ Օրբելեանի պատմութեան օգնութեանը: Վերջինը գրում է «Դարձեալ և յ385 թուականին աստուածազօր ։ իշխանն Սմբատ ելեալ յաւուր միում յաքըունեաց իւր, որ էր ։ յԵղեգիս գիւղաքաղաքից երթայր ի զբօսանս որսոց, և պատահեալ խոտակերաց և աստուածազգեաց ճգնաւորաց դո-

• զեալ ի ծերպս աըշտահանդ վիճայն որ ի վէրայ Եղէթէտց ի ձորն,
 • բարձրահայեցիկի վերայ գետոյն, որոց տեղիքն Քարէ վանս
 • կոչիւր: Եւ զարմացեալ ընդ ներքեւալ և ընդ անշբացեալ
 • տեսիլս նոցա՝ հարցանէր ի նոցանէ զկեանս նոցա և նոքա հե-
 • զիկ պատասխանեալ առեն «Հալածեալ փախստական եղաք
 • յաշխարհէ թերեւս կարասցուք ապրել ի դառն ալեկոծու-
 • թենէ սորա»: Ապա այնուշետե խնդիր առնէ իշխանն եպիս-
 • կոպոսին իւր Տէր Յակորայ. և հրամայէ ձեռն ի գործ ա-
 • ծել և փութապէս շինել եկեղեցի ի պատշաճաւոր տեղի զի
 • անդ բնակեցուսցէ զսուրբ ճգնաւորն:

• Եւ նորա եկեալ առ սուրբ հարսն հարցանէ զկամս նոցա. և
 • նոքա ցուցանեն տեղի մի տափարակ ի ներքոյ քարոյն ուղ-
 • դորդ ի վայր. յորում տեղուջ սկիզբն առնէ կոփածոյ քա-
 • րամբը և շինէ եկեղեցի գմբեթայարկ յանուն «լբայն Գրիգորի».
 • և բերէ զաւագագոյն ծերն, որում անունն Անդրան և զա-
 • շակերտն իւր զԱզարիա այլովք եղբարբքն և բնակեցուցանէ
 • անդէն: Եւ եկեալ իշխանին օրհնէ (գուցէ օրհնել տայ) զե-
 • կեղեցին. և բարեպաշտ տիկինն Սովիա գնէ զգիւղն Հաւա-
 • ռ հտնդէպ վանիցն կայ իւր սահմանուին. և տայ ի ժառան-
 • գութիւն եկեղեցւոյն. և այլ ևս այգիս և ծաղկոցս յԵղե-
 • գիս»:

• Եւ զարգարէ զնա բաղում սպասուք և փարթամացու-
 • ցանէ ամենայն պիտոյիւք, և մհծամհծ նզովիւք հաստատէ
 • զշաւու գիւղն որ ոչ հանին ի նմանէ: Եւ կատորեն ինքեանց
 • յիշատակ զտօն սրբոյն Գրիգորի և քառասուն մի պատարագ
 • զԱզարդապահուին և կոչեն զտեղին յանուն ծերոյն Անեղմոնէ
 • (վան+ *):

Այս հատուածի մէջ ուշադրութեան եմ առնում այն տե-
 • զերը: ուր խօսում՝ է աշխանականդ +արէէ մասին Եղեգնիսից վե-
 • րև, տափարակ տեղի վերաբերութեամբ +ալի Ներդւ ուղարկ է
 • վայր, եկեղեցի յանուն սուրբ Գրիգորի, Հաւա գիւղ վանի հան-
 • դէպ և այլն, Ով տեսնի Գիւնէի վանքի այժմեւոն աշխարհա-
 • գրական տեղը և նորա շըջակայքը, և համամատի յիշեալ
 • պատմութիւնը այդ աշխարհագրական կէտերի հետ, այն ժա-

(*) Օբբ. պատ. նահ. Սիս. ԴԼ. Ռ.

մանակի գժուտար թէ կտոկածի Գիւնէի վանքի Ահերմոնի վանքը լինելու մասին։ Արգար և վանքի գլխին, շատ բարձր, կանգնած են սիւնանման ամպերը, բարձրացող մերկ ժայռեր հիւսիսային կողմից, ուր մի սրածայր ժայռի վերայ, ասում են, կայ մի փոքրիկ մատուռ, Արձանականգ քարերի տակ, տափարակ տեղ կառուցած է Գիւնէի վանքը առողջ Գէսրէ անունով։ Ժայռերի դէմ, հարաւ կամ վանքի դէմ, Ալագեազ գետի ձախ ափից տարածւում է խիտ անտառ՝ Թաքեաղոնդուրան լեռն արելեան լանջի վերայ։ Այդ անտառում և նորա շրջակայքում Հաւու գիւղ չկայ, բայց յիշեալ անտառը այսօր ևս կոչվում է Հաւու Նեղայ։ Եւ այդ բոլորը Եղեգեսից (Ալագեաղից) վերև, ձորի մէջ, ինչպէս մատնացոյց է անում պատմութիւնը, Արգարև այժմ անհետացած են Հաւու գիւղը, Քարեան և Ահերմոն անունները, բայց աշխարհագրական գիրքը և նկարագրութեանց ակնարկները կան և այժմ։ Հաւանական է, որ Հաւու գիւղը ոչ հանդէալ կանիցն էայ, եղել է այժմեան Հաւու անտառի տեղը։ Գիւնէի վանքը ուրիշ հանդէալ չունի, բացի Հաւու մեշան։

Հերմոնի վանքը Եղեգնաձորում լինելու մասին, բացի Օրբելեանը, մասնանիշ են լինում սյլ և Թովմա Մեծովեցին և Հայր Միքայէլ Չամչեանը։ Առաջինի խօսքերը Ինձիճեանը բերելով ասում է «Ժողովեալ (Գրիգորի Տաթեացւոյ) զբազումն յաշակերտաց իւրոց՝ զՄիխմար ի Տաթեաոյ, զՅոհաննէս ի յԵղէկեաց վանից Հերմոնի»^(*)) իսկ Չամչեանը գրում է «Յոհաննէս վարդապետ մականուանեալն կոլոտիկ վարժապետն կոչեցեալ ի Հերմոնի վանից Եղեգնայոց»^(**))։

Արքեպիսկոպոս Զալալեանի գիրքը ոչ միայն մռքովը չէ անցնում, որ Գիւնէի, կամ նարա խօսքով, Արգունւոյ վանքը կարող է լինել Հերմոնի վանքը այլ և մեծ անմեղութեամբ Հերմոնի վանքը, խառնում է Քարկոփայ վանքի հետ։ և միամուաբար ասում է «ի պատմութեանց և յարձանագրութեանց մարթ է անտարակոյս կարծել թէ մենաստանս այս (Քարկոփի վանք) ընկալեալ է զերիս անուանս ի զանազան պատահմանց ի զանազան ժամանակս, ուստի և կոչի երբեմն Ահերմոնի

(*) Ինձիճեան ստորագր. Հայաստանի երես 262.

(**) Չամչեան հատ. Գ. երես 487.

վանք, երբեմն Քարակոփի վանք և երբեմն Խոտակերաց, *):

Թէ այսպէս և թէ այնպէս, խոռոք վերջացնում եմ Գիւնէի վանքի մասին և կրկին իշնելով նոյն անուն գիւղը, շարունակում եմ ճանապարհս գետի ափերով և մի ժամկց յետոյ համանում եմ մի անպիտան թրքաբնակ գիւղ, Կալսաղ անուն, Սորանից դէպի հիւսիս, բարձրաւանդակ սարի լանջում հայկական աւերակների վերայ և քանդուած եկեղեցու մօտ շինած է Կալսաղը անունով թրքաբնակ գիւղը, շրջապատ անտառի մէջ, Աւերակների հետ և գիւղի անունը ունի հայկական ծագում:

Կաւշուղից դէպի արևելք, գետի ձախ ափում, կայ մի այլ թրքաբնակ գիւղ Կալսաղը կամ Ղալսիլը, կամ ներքին Զանի անունով, ուր կանգնուն կայ մի փոքրիկ սագաշէն կամարակապ եկեղեցի արևմտեան դռնով, առանց թուականի և արձանագրութեան, որ նոյն գիւղացի Փիրի Զիլֆղար օղլուն մարագի տեղ է ծտռայում: Գիւղի մօտ, ձորի մէջ, գետակի վերայ հնուց եղած է միակամար քարաշէն կամուրջ, այժմ խոնարհուած:

Յիշեալ Կաւշուղ գիւղից կէս վերստաչափ անցած՝ ես հանդիպում եմ երկու գետակի խառնուրդի: Նոցանից մինը հոսում է արևելեան, իսկ միւսը հիւսիսային կողմից: Վերջին առուակով աստիճան առ աստիճան կը արձրանամ Այսանի գիւղը կամ Աշապէսի լանդը:

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ.

ԱԶԳԱՅԻՆ

Նորին Վեհափառութիւն Յուլիս ամսոյ 3-ին բարեհաճեցաւ գնալ Յիշեականի ամարանոց, վանուց ներքին և արտաքին գործերի հսկողութիւնը յանձնելով Գեր. Թագէոս Արքեպիսկոպոսին մինչև իւր վերադարձը, պատուիրելով իւրաքանչիւր պաշտօնատեարց արթնութեամբ հսկել իւրեանց գործերին:

(*) Զալալ. Ճանապ. Հ. թ. երես 170.